մասին, իսկ միւս կողմից չի մոռանում յիշել հայ-թիւրքական «բարեկամութեան» մասին և յայտնում է, որ թիւրքը երբեք հային թշնամի չէ և առաջարկում է Օլթիից յետ քաշել մեր հայկական զօրքերը և ապա սկսել բանակցութիւններ:

Վ. Նաւասարդեան (դաշ.).—Ոչի՛նչ, հայկական բանակը կը բանակցի:

Նախարարապետ. — Մենք պատասխանեցինք, որ բարի դրացիական կապեր ստեղծելու համար չեն խօսում ոչ Բրեստի, ոչ Բաթումի և ոչ Տրապիզոնի դաշնագրերի անունից, որ բանակցելու համար պէտք է բոլորովին այլ լեզու գտնել, իսկ եթէ այդ լեզուն կամովին չի գտնուի, նրան գտնելը կը յաջողեցնի, այո՛, հայկական քաջարի բանակը (բուռն ծափեր):

Ահա Բէքիր Սամիի և մեր միջև փոխանակուած գրութիւնները:

Երևան. Հ. Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան.

Հայաստանի կառավարութեան հիմնումից ի վեր մեր կառավարութիւնը նրա հետ պահպանել է բարեկամական յարաբերութիւններ և այդ շարունակել է իրեն համար վարքագիծ ընտրել: Նա այդ գործով էլ ցոյց է տուել հակառակ ձեր շարունակական յարձակումներին: Ձեր դրաման տակ եղող հողամասերում գտնուող, բայց իր ինքնուրոյնութիւնը որոշող և Միլլի Շուրա կազմող իսլամ ազգաբնակութեան դէմ միշտ կրկնուող յարձակումների և ջարդերի ձեր քաղաքականութեան հանդէպ մեր կառավարութիւնը բաւականացել է միայն բարեկամական ծանուցագրերով:

Մի քանի օրից ի վեր Օլթիի իսլամ ժողովրդի հանդէպ ձեր կանոնաւոր զօրամասերի կողմից շարունակուող պատերազմական գործողութիւնների մասին մեր արևելեան ճակատի Ն. Գ. հրամանատար փաշայի կողմից երեք օր առաջ ձեր զինուորական ուժերի հրամանատարութեան տրուած բարեկամական ծանուցագիրը պատերազմական գործողութիւնները անմիջապէս դադարեցնելու մասին մինչև այժմ առանց պատասխանի է մնացել և, ընդհակառակն, երէկուանից ի վեր Օլթիի վրա յարձակումը աւելի շատացած ու սատկացած է: Մեր ազգը իր ամբողջ ուժով փափագում է բարեկամական յարաբերութիւններ պահել հայ ցեղի հետ, հայկական շահերը թիւրքականի հետ անհամապատասխան չեն, ընդհակառակը, կարելի է համաձայնեցնել և աւելի սերտ դարձնել: Եթէ դուք անկողմնակալօրէն դատէք, կը յուսամ թէ դուք էս կը հաստատէք, որ ձեր բռնած ընթացքը չի համապատասխանում ձեր ազգային իսկական շահերին:

Համոզուած ենք, որ անգլիացիները մշտապէս իրար հետ ապրելու ստիպուած երկու հարևան ցեղերը արիւնհեղութեան մղելով են զբաղուած: Մենք ձեր կառավարութեան և ազգի համար բոլորովին վնասակար կը գտնենք, որ ձեր ազգը անգլիացիների ձեռքը խաղալիք դառնալով՝ մեր կառավարութեան դէմ թշնամութեան ձեռնարկէ:

Ձեր պատգամաւորութիւնը Մոսկվայում ռուս սովէտական կառավարութեան հետ բանակցութիւններ է վարում. մենք էլ ռուս սովէտական իշխանութեան հետ քաղաքական յարաբերութիւնների ձեռնարկած լինելով՝ խաղաղօրէն պատերազմին վերջ տալու կաշխատենք միասնաբար, ուստի ձեր յարձակումը բացարձակապէս զարմանալի և ցաւալի մի երևոյթ է:

Յարձակումների շարունակութեան ամբողջ պատասխանատուութիւնը թողնելով հայկական կառավարութեան վրա՝ այս անգամ էլ թիւրք ազգային կառավարութեան արտաքին գործերի կոմիսարի հանդամանքով ես խնդրում